



# ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ

Ա.Մ. ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ ԱՐԵՄՍԵԱՆ ԹԵՄԻ

**WESTERN PRELACY**

**OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA**

**H.E. ARCHBISHOP MOUSHEGH MARDIROSSIAN, PRELATE**

Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745

E-mail: [Prelacy@aol.com](mailto:Prelacy@aol.com) Website: [www.westernprelacy.org](http://www.westernprelacy.org)



## ՍՓԻՒՔԻ ՀԱՐՑԵՐՈՒ ՆԱԽԱՐԱՐ ՀՐԱՆՈՅՇ ՅԱԿՈՒԲԵԱՆԻ ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆԸ ԱԶԳ. ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ

«Հայաստան» Համահայկական Հիմնադրամի տարեկան թելեթոնին ներկայ ըլլալու համար Լոս Անճելըս իր այցելութեան առիթով, Հայաստանի կառավարութեան անդամ եւ Սփիւռքի հարցերու առաջին նախարար Հրանոյշ Յակոբեան Հինգշաբթի, 20 Նոյեմբերի կեսօրին այցելութիւն մը տուաւ Ազգային Առաջնորդարան եւ տեսակցութիւն մը ունեցաւ Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեանի հետ:

Յարգելի նախարարին կ'ընկերանային Հայաստանի գլխաւոր հիւպատոս Արմէն Լիլոյեան եւ հիւպատոսութեան պաշտօնատարներէ բաղկացած պատուիրակութիւն մը:



Առաջնորդ Սրբազանն ու ժողովականութեան ներկայացուցիչները, հիւրերուն հետ, առաջին հերթին դահլիճին մէջ ունեցան պաշտօնական կարճատեւ հանդիպում մը: Առաջնորդ Սրբազանը յանուն Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսին ու Թեմիս ժողովականութեան՝ ողջունեց հիւր նախարարուհին, որ, իր կարգին գոհունակութիւն արտայայտեց այս այցելութեան

կեանքին մէջ Հայց. Առաքելական եկեղեցւոյ դերը:

Հանդիպումը շարունակուեցաւ «Տիգրան եւ Չարուհի Տեր Ղազարեան» սրահին մէջ, ճաշի սեղանի շուրջ, մտերմիկ ու հոգեհարազատ մթնոլորտի մէջ, մասնակցութեամբ ժողովական ներկայացուցիչներու եւ ազգայիններու:

Առաջնորդ Սրբազանին կողքին, հիւրընկալման ներկայ էին, Մեծի Տանն Կիլիկիոյ միաբանութեան երեց անդամներէն՝ Բարձր. Տ. Եփրեմ Արք. Թապազեան, Ազգ. Կեդրոնական Վարչութեան անդամ Տիար Խաժակ Տիգրիճեան, Միացեալ Հայկական Հիմնադրամի տնօրէն Տիար Յարութ Սասունեան, Հոգեւորականաց դասու անդամներ, Կրօնական ժողովի ու Ազգային Վարչութեան ներկայացուցիչներ, մեր եկեղեցիներու

հոգաբարձութանց ատենապետներ, Ազգ. Առաջնորդարանի Տիկնանց Օժանդակ Մարմինի անդամներ, Ազգ. Վարժարաններու Խնամակալ Մարմինի ներկայացուցիչներ, տնօրեններ ու մանկամսուրի վարիչներ, ինչպես նաև Ազգ. Առաջնորդարանի բարերարներ ու գործարար ազգայիններ:

Չերթաբար ողջոյնի խօսքեր արտասանեցին Ազգ. Վարչութեան անունով՝ Ազգ. Վարչութեան փոխ ատենապետ Տիար Կարո Աւագեան, Ազգ. Կեդրոնական Վարչութեան անդամ Տիար Խաժակ Տիքիճեան: Սրտի խօսքեր արտասանեցին նաև Տիար Յարութ Սասունեան, Տիկնանց Օժանդակ Մարմինի ատենապետուհի Տիկին Մարիամ Կարապետեան, եւ Ազգ. Վարչութեան անդամներէն Տիար Վարուժան Տէր Սիմոնեան, որ նախարուհիին յանձնեց Ուիլիլմ Սարոյեանի ծննդեան 100ամեակին նուիրուած նոր գիրք մը:

Այնուհետեւ, իր սրտի խօսքը արտասանեց Առաջնորդ Սրբազանը:



Ապա Չայաստանի հանրապետութեան գլխաւոր հիւպատոս Տիար Արմէն Լիլոյեան ներկայացուց նախարար Չրանոյշ Յակոբեանի ասպարեզին հիմնական գիծերն ու կալուածները, սկսելով անոր համալսարանական տարիներէն, մինչեւ պետական ու կառավարական մակարդակի ծառայութիւնները:

Վերջապէս, ան հրաւիրեց Տիկին Չրանոյշ Յակոբեանը արտասանելու իր խօսքը:

Նախարար Չրանոյշ Յակոբեան առաջին հերթին շնորհակալութիւն ու գոհունակութիւն յայտնեց ընդունելութեան համար եւ հաստատեց, թէ առաջին այս այցելութեան առիթով իսկ, ինքզինք կը զգայ հարազատ տան մէջ: Ան խօսեցաւ նոր կազմուած նախարարութեան ծրագիրներուն ու մտահոգութիւններուն մասին, շեշտելով, որ այս նախարարութիւնը պիտի ըլլայ Սփիւռքի ներկայութիւնը՝ Չայաստանի ու անոր իշխանութեան մէջ:

Չանդիպումի աւարտին, նախարար Յակոբեան պատասխանեց ներկաներու հարցումներուն:

Աւարտին, տեղի ունեցաւ յուշանուէրներու փոխանակում:

Չրաժեշտի պահուն, ներկաները ունեցան յիշատակի խմբանկար մը:

## MINISTER OF DIASPORA AFFAIRS HRANUSH HAKOBYAN VISITS THE PRELACY

On the afternoon of Thursday, November 20, the newly appointed Minister of Diaspora Affairs Armenia; Hranush Hakobyan visited the Prelacy and met with H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate. Mrs. Hakobyan is in Los Angeles for the annual Armenia Fund Telethon. She was

accompanied by Consul General the Honorable Armen Liloyan and a delegation from the Armenian Consulate of Los Angeles.



Upon their arrival Mrs. Hakobyan and guests were greeted by the Prelate and council members, and were led to the reception room where the official meeting took place. The visit continued at the “Dikran and Zarouhie Der Ghazarian” Hall where a number of guests had gathered to welcome Mrs. Hakobyan, including H.E. Archbishop Yeprem Tabakian, Central Executive Council member

Mr. Khajag Dikijian, United Armenia Fund president Mr. Harut Sassounian, clergy, Executive Council members, Board of Trustees Chairmen, Ladies Auxiliary members, Board of Regents representatives, principals and directors, and sponsors.

Executive Council Vice-Chair Mr. Garo Avakian and Mr. Khajag Dikijian were invited to make their welcoming remarks. Remarks were also offered by Mr. Harut Sassounian, Ladies Auxiliary Chair Mrs. Mariam Karapetian, and Executive Council member Mr. Varoujan Der Simonian who presented Mrs. Hakobyan with a newly published book dedicated to the 100<sup>th</sup> anniversary of William Saroyan.

The Prelate was then invited to convey his thoughts and remarks, followed by Consul General Liloyan who presented a brief background of the minister then invited her to offer her address.

Mrs. Hakobyan thanked the Prelate and guests for their warm welcome and spoke in detail about the collaboration between Armenia and the Diaspora.

At the conclusion of the program, an exchange of mementos took place between the Prelate and Mrs. Hakobyan.

The reception concluded with a question and answer session.

\*\*\*

## **«ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅՅԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿԱԼԱ ՃԱՇԿԵՐՈՅԹ**

«Հայաստա» Համահայկական Հիմնադրամի կալա ճաշկերոյթը տեղի պիտի ունենայ Կիրակի, Նոյեմբեր 23-ին, Երեկոյեան ժամը 7-ին, Hyatt Regency Century Plaza պանդոկին մէջ: Պատուոյ հիւրն է Արցախի Նախագահ Բակո Սահակեան, իսկ օրուան բանախօսն է Սփիւռքի հարցերու Նախարար Հրանոյշ Յակոբեան:

Գերշ. Տ. Եփրեմ Արք. Թապագեան ներկայ պիտի ըլլայ ճաշկերոյթին իբրեւ Առաջնորդ Սրբազան Հօր ներկայացուցիչը, ինչպէս նաեւ Թեմիս Ազգային Վարչութեան ներկայացուցիչներ:

## **ARMENIA FUND ANNUAL GALA**

The annual gala of Armenia Fund will take place on Sunday, November 23<sup>rd</sup>, at the Hyatt Regency Century Plaza Hotel. The guest of honor is President of the Nagorno-Karabakh Republic His Excellency Bako Sahakyan, and the keynote speaker is Minister of Diaspora Affairs Hranush Hakobyan.

H.E. Archbishop Yeprem Tabakian will represent the Prelate. Executive Council member will also be in attendance.

\*\*\*

### **ՍՈՑԵԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ՀՆՉԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ 121-ԱՄԵԱԿԻ ՀԱՆԴԻՍՈՒԹԻՒՆ**

Սոցեալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութեան 121-ամեակի նուիրուած հանդիսութիւն մը տեղի պիտի ունենայ Շաբաթ, Նոյեմբեր 22-ի երեկոյեան Կլենտէյլի Presbyterian եկեղեցոյ մէջ:

Բանախօսն է Ս.Դ.Հ.Կ.-ի Կեդրոնական Վարչութեան Հայաստանի ներկայացուցիչ Յ.Յ. պաշտպանութեան նախկին փոխ նախարար՝ Վահան Շիրխանեան:

Յանուն Առաջնորդ Սրբազան Հօր, Կլենտէյլի Ս. Աստուածածին եկեղեցոյ հոգեւոր հովիւներէն՝ Արժ. Տ. Արտակ Քիւյ. Տեմիրճեան ներկայ պիտի ըլլայ ձեռնարկին:

### **121<sup>ST</sup> ANNIVERSARY OF THE SOCIAL DEMOCRAT HUNCHAK PARTY**

The Social Democrat Hunchak Party will celebrate its 121<sup>st</sup> anniversary on Saturday, November 22<sup>nd</sup>, at the Glendale Presbyterian Church.

The keynote speaker is former deputy minister of defense Vahan Shirkhanian.

St. Mary's Church pastor Rev. Fr. Ardak Demirjian will attend on behalf of the Prelate.

\*\*\*

### **ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱԶԱՆ ՀԱՅՐԸ ԿԸ ՇՆՈՐՀԱՒՈՐԷ ԼԻԲԱՆԱՆԻ ԱՆԿԱԽՈՒԹԵԱՆ ՏՕՆԸ**

Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեան Չորեքշաբթի, 19 Նոյեմբերի առաւօտուն, քաղաքավարական պաշտօնական այցելութիւն մը տուաւ Լոս Անճելըսի մօտ Լիբանանի հիւպատոսարանը, եւ հանդիպեցաւ գլխաւոր հիւպատոսի տեղակալ Տիար Հուսամ Տիապի հետ:

Սրբազան Հոր կ'ընկերանային Հոգշ. Տ. Պարթև Վրդ. Կիլիմեան եւ Ազգ. Վարչութեան անդամ Տիար Վահրիճ Փիլաւճեան:



22 Նոյեմբեր 1943-ին  
Լիբանան ձեռք ձգեց  
անկախութիւն: Այս առիթով՝  
Լիբանանի հիւպատոսարանը  
յառաջիկայ Կիրակի  
կազմակերպած է յատուկ  
ընդունելութիւն: Նկատի  
ունենալով, որ Առաջնորդ  
Սրբազանը այս շաբաթավերջին  
կը մեկնի Վատիկան, Վեհափառ  
Հայրապետին  
պատուիրակութեան մաս

կազմելու եւ հանդիպելու Հռոմի Զահանայապետ Պենետիկոսոս ԺՁ. Պապին, ուստի՝ քաղաքավարական այցելութեամբ շնորհաւորեց Լիբանան Հայրենիքի անկախացման 65-ամեակը, մաղթելով Լիբանանին կայունութիւն, խաղաղութիւն եւ յարաճուն վերելք:

Գլխաւոր հիւպատոսը շնորհակալութիւն յայտնեց Սրբազան Հոր իր պաշտօնական հանդիպումին համար եւ գոհունակութեամբ ու դրուատիքով խօսեցաւ Լոս Անճելըսի Լիբանանահայ ազգայիններու օրինակելի վարքին եւ հիւպատոսարանին հետ բարի գործակցութեան մասին:

Հրաժեշտ առնելէ առաջ, Առաջնորդ Սրբազանը յուշանուէր մը յանձնեց հիւպատոսին, շեշտելով Ազգ. Առաջնորդարանին ու հիւպատոսարանին միջեւ գոյութիւն ունեցող սերտ գործակցութեան եւ անգամ մը եւս շնորհաւորելով 65-ամեայ Լիբանանի անկախութեան տօնը:

Լիբանանի անկախութեան 65-ամեակին առիթով, Կիրակի, 23 Նոյեմբերի երեկոյեան ժամը 5-ին, Լոս Անճելըսի Լիբանանի հիւպատոսարանը կազմակերպած է պաշտօնական ընդունելութիւն մը, որ տեղի պիտի ունենայ Riviera Country Club-ի մէջ, Pacific Palisades:

Յանուն Առաջնորդ Սրբազան Հոր, Հոգշ. Տ. Պարթև Վրդ. Կիլիմեան ներկայ պիտի ըլլայ ընդունելութեան, ինչպէս նաեւ Ազգային Վարչութեան ներկայացուցիչ Տիար Վահրիճ Փիլաւճեան:

## PRELATE CONGRATULATES LEBANON'S INDEPENDENCE DAY

On the morning of Wednesday, November 19<sup>th</sup>, H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, paid an official visit to the Consulate General of Lebanon where he met with Acting Consul General Houssam Diab. Accompanying the Prelate were Very Rev. Fr. Barthev Gulumian and Executive Council member Mr. Vahrij Pilavjian.

The Consulate General has organized an official reception in celebration of the 65<sup>th</sup> anniversary of the independence of Lebanon, which will take place on Sunday, November 23<sup>rd</sup>. Given that the Prelate will be traveling to the Vatican at the end of the week to join the entourage of H.H. Catholicos Aram I

on an official visit with H.H. Pope Benedict XVI, the Prelate extended his congratulations to the Acting Consul General and his well wishes for stability, peace, and prosperity for Lebanon.



The Acting Consul General thanked the Prelate for his well wishes and expressed appreciation for the continued collaboration between the Lebanese and Armenian communities.

At the conclusion of their meeting the Prelate presented Acting Consul General Diab with a memento.

The Independence Day reception will take place on Sunday, November 23<sup>rd</sup>, at the Riviera Country Club in Pacific Palisades. Very Rev. Fr. Barthev Gulumian and Executive Council member Mr. Vahrij Pilajian will attend on behalf of the Prelate.

\*\*\*

## Ս. ԲԱՌԱՍՆԻՑ ՄԱՆԿԱՆՑ ԵԿԵՂԵՑՈՅ ՕԾՄԱՆ 20-ԱՄԵԱԿ

Կիրակի, 16 Նոյեմբերին, Սրբոց Զառասնից Մանկանց եկեղեցւոյ օծման 20-ամեակին առիթով, Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Ս. Մուշեղ Ս. Արք. Մարտիրոսեան, եպիսկոպոսական հանդիսաւոր սուրբ եւ անմահ պատարագ մատոյց եւ իր հոգեւոր պատգամը ուղղեց գաղութի գաւակներուն: Սուրբ Սեղանին սպասարկեցին Զրիստոնեական Դաստիարակութեան Բաժանմունքի վարիչներէն Զոզ. Զայր Պարթեւ եւ եկեղեցւոյս հոգեւոր հովիւ Արժ. Տ. Զրանդ Զին. Երեցեան:



Սրբազան Զայրը քարոզի պահուն, օրուան խորհուրդէն թելադրուած, նախ փառք տուաւ ամենաբարին Աստուծոյ իր տուած մեծ շնորհքին համար, որով 20 տարիներ առաջ բոլորին երազն ու փափաքը կ'իրականացներ սեփական եկեղեցի մը ունենալու ուրախութեամբ, նշելով, որ քսան տարիներէ ի վեր այս եկեղեցին կը հոգայ շրջանի հաւատացեալներու հոգեւոր

սնունդը: Սրբազան Զայրը խօսեցաւ գործող ու այս կեանքէն առ յաւետ մեկնող երախտաւորներու մասին, որոնք խորունկ տեսլականով ու

հաւատքով կրցան երազը իրականութեան վերածել ու յոյս ներշնչել գալիք բոլոր սերունդներուն: «Մենք ալ այսօր - պատգամեց Սրբազան Յայրը - եկէ՛ք մանուկի խոնարհութեամբ ծառայենք, որպէսզի հաւատքի ծառայութեամբ միասնաբար բարձրանանք»: Զարոզի աւարտին, Սրբազանը գնահատեց եկեղեցւոյ հոգեւոր հովիւը, Յոգաբարձութիւնը, Երեսփոխանները, Տիկնանց Միութիւնը, սարկաւազաց ու դպրաց դասերը, եւ բոլոր երախատաւորները:

Պատարագի աւարտին, ներկաները երգեցին «Կիլիկիա» մաղթերգը, որմէ ետք Սրբազան Յօր պահպանիչով՝ գոհունակ սրտով մեկնեցան իրենց տուները:



Նշենք, որ օր մը առաջ, Շաբաթ, 15 Նոյեմբերի երեկոյեան, «Ղուկասեան» սրահին մէջ, հովանաւորութեամբ Առաջնորդ Սրբազան Յօր եւ կազմակերպութեամբ Եկեղեցւոյ Յոգաբարձութեան եւ Տիկնանց Միութեան, տեղի ունեցաւ Եկեղեցւոյ օծման քսանամեակին նուիրուած ճաշկերոյթ, որուն ընթացքին արտասանուեցան յիշատակի խօսքեր,

ցուցադրուեցաւ այս առիթով պատրաստուած տեսաերիզ մը, գործադրուեցաւ գեղարուեստական յայտագիր, կատարուեցաւ մոմավառութիւն եւ աւարտին՝ կտրուեցաւ քսանամեակի կարկանդակը: Գնահատանքի ու քաջալերանքի վերջին խօսքը արտասանեց Առաջնորդ Սրբազան Յայրը, որ շնորհաւորեց Օրէնճ Զաւուսթիի մեծ ընտանիքը եւ բեղուն տասնամեակներ մաղթեց անոր:

## 20<sup>TH</sup> ANNIVERSARY OF THE CONSECRATION OF FORTY MARTYRS CHURCH

On Sunday, November 16<sup>th</sup>, H.E. Archbishop Moushegh Mardirossian,



Prelate, celebrated Divine Liturgy and delivered the sermon at Forty Martyrs Church in Orange County to mark the 20<sup>th</sup> anniversary of the consecration of the church.

Assisting the Prelate at the altar were Very Rev. Fr. Barthev Gulumian and parish pastor Rev. Fr. Hrant Yeretjian.

In his sermon the Prelate thanked God for the realization of the dream twenty years ago for the parish to have its own church and for the spiritual guidance the church has

been providing since. The Prelate paid tribute to the devoted servants who contributed to the establishment of the church and in doing so inspired coming generations. The Prelate concluded his sermon by commending and offering a prayer for the Pastor, Board of Trustees, Delegates, Ladies Auxiliary, deacons, altar servers, and choir members.

The service concluded with the Prelate's benediction and the singing of "Giligia".

The 20<sup>th</sup> anniversary banquet took place under the auspices of and with the participation of the Prelate on the evening of Saturday, November 15<sup>th</sup>, at "Gugasian" Hall. The banquet was organized by the Pastor, Board of Trustees, and Ladies Auxiliary, and included remarks, an artistic program, a video presentation, and a candle lighting ceremony. The Prelate conveyed his congratulations and encouragement and wished the church many more years of service to the community.

\*\*\*